Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը «Սոցիալական աշխատողի» օրվան նվիրված միջոցառմանը

11.10.2013

Տիկնայք և պարոնայք,

Հարգելի գործընկերներ.

Քաղաքակրթություն ունեցող և մշակույթ դավանող յուրաքանչյուր հասարակություն և պետություն իր կարևորագույն խնդիրն է համարում ծավալելու անհատի հասարակական վիճակի բարելավման, նրա առջև ծառացած սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցող գործունեություն՝ նպատակ ունենալով կատարելագործելու հասարակական կյանքի հոգևոր և նյութական արժեքները:

Մենք, ձեզ հետ միասին, կարող ենք հպարտանալ, որ անհատի, ընտանիքի նկատմամբ հոգատարությունն ու մարդասիրական գործառույթները հայ ժողովրդի համար ոչ թե նորօրյա, այլ պատմական արժեքներ են: Սակայն, այդ հպարտությունը սոսկ արձանագրային արժեքի կվերածվի, եթե այդ գործառույթները շարունակական չլինեն և, ըստ ամենայնի, հաշվի չառնվեն բոլոր այն պայմաններն ու մարտահրավերները, որոնք կան մեզանում, որոնց հիմնախնդիրների լուծմանն են կոչված սոցիալական ծառայությունները:

Ահա այս առումով պետք է բավարարվածությամբ նշեմ, որ մենք ունենք և՛ օրինակելի փորձ, և՛ արդյունք, և՛ բավականաչափ հմտություն՝ պատվով շարունակելու անչափ կարևոր առաքելությունը:

Չեմ ցանկանում խոսքս ծանրաբեռնել թվերի ու փաստերի շարադրմամբ, ուստի ձեռք բերված արդյունքներից հիշատակեմ միայն կազմակերպչական, նախապայմանային այն գործառույթները, որոնք նախատեսված են Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2010-2013 թվականների ծրագրով և որոնք ձեր կողմից կատարվում են հաջողությամբ: Այդ կարևորագույն ծրագրում համալիր կերպով ներկայացվել են ենթաբնագավառներում իրականացվող բարելավման ենթածրագրեր՝ ուղղված մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությանը, իրազեկության բարձրացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

Մեզ համար կարևոր էր միջոցները ճիշտ հասցեականությամբ ուղղորդելու խնդիրը և դեռ անցյալ տարի տեղեկատվական շտեմարանների թարմացման արդյունքում փաստագրվեց նպաստի իրավունք ունեցող 15.508 ընտանիք, նրանց թվում նոր նպաստառու դարձավ 4827-ը: Այդ ընտանիքներին անցած վճարվել է ավելի քան 5,5 միլիարդ դրամ ընտանեկան նպաստ, 3000-ից ավելի նորածինների համար շուրջ 154 միլիոն, 931 երեխայի խնամքի համար՝ շուրջ 253 միլիոն, նպաստառու ընտանիքի առաջին դասարան հաճախող 1295 երեխայի համար՝ միանվագ ավելի քան 32 միլիոն դրամ և այլն:

Համոզված եմ, որ ընթացիկ տարեվերջին, երբ կամփոփվեն արդյունքները, դրանք նույնքան պերճախոս կլինեն:

Հարգելի գործընկերներ:

Ձեռքբերումներն ակնհայտ են, սակայն դրանք երբեք չեն բավարարելու մեզ:

Անձամբ ես, սոցիալական ծառայությունների առաքելությունն ամենևին էլ թվերի մեջ չեմ տեսնում, այլ կարիքավորության և սոցիալական մյուս մարտահրավերների նվազեցման ու մեղմացման մեջ:

Բնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված կառավարության ծրագրերի անթերի իրականացումը պայմանավորված է Ձեր մասնագիտական հմտությամբ, գիտելիքներով և, որ ամենակարևորն է՝ մարդկային բարձր որակներով:

Օրերս ես թերթում էի սոցիալական ծառայությունների համար լույս ընծայված ուսումնական փաթեթի մի գիրք, որի վերնագրում աչքի էր զարնում «Ձեռք մեկնել առավել խոցելիներին» նախադասությունը: Համաձայնեք, որ սա ճիշտ պատգամ է: Սակայն, եթե օգնության համար մեկնած այդ ձեռքը մաքուր չէ, եթե այդ ձեռքի բազուկն ամուր չէ, եթե այդ ձեռքի երակներում բարության, մարդասիրության ավիշ չկա, ապա մեզանում խոցելիների թիվն ավելի մեծ կլինի, և հանրությունը, ի դեմս այդպիսի ձեռքի, կունենա անբուժելի մի խոց, որի հասցրած ցավն ավելի խոր ու դճվար դարմանելի կլինի:

Ես վստահ եմ, որ Լոռու մարզի սոցիալական ծառայություններում աշխատում են մարդիկ, ովքեր իրենց հմտությամբ, գիտելիքներով և մարդասեր հոգատարությամբ իրականացնելու են այն բոլոր խնդիրները, որոնք առաջադրվում են կառավարության կողմից՝ ի նպաստ մեր հասարակության մեջ ապրող կարիքավոր մարդկանց և խմբերի:

Այս վստահությամբ էլ ահա շնորհավորում եմ սոցիալական ծառայությունների աշխատողների մասնագիտական տոնը, ձեզ մաղթում եմ քաջառողջություն, ձեր ընտանիքներին՝ բարեկեցություն և անսպառ հաջողություններ աշխատանքում: